

**ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ԷԹԻԿԱՅԻ և ԱՐԺԵՔՆԵՐԻ
ԿԱՐԱՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Տվյալ աշխատությունը շատ
գեղեցիկ , մատչելի և պարզ
օրինակներով ցույց է տալիս
Իսլամի էթիկայի արժեքները,
որոնք գոյություն են ունեցել շատ
ավելի վաղ ,քան մյուս
քաղաքակրթություններում:
Յուրաքանչյուր ոլորտ ունի իր
էթիկան, որը մեծ հարգանք է

ցուցաբերում մարդկանց և
իրավիճակներին, լինեն
ռազմագերիներ, պատերազմ, սով
թե ճակատամարտ: Շատ
քաղաքակրթություններ միայն
վերջերս են սահմանել
նմանատիպ էթիկա: Գեղեցիկ են
պատկերված նաև երեխաների,
ծնողների և ազգակցական
կապերի իրավունքները:
Յուրաքանչյուր իրավիչակի
համար Իսլամը ունի

քաղաքակիրթ և էթիկ լուծում:
Հետևելով դրան մենք կարող ենք
ունենալ ներդաշնակ , գեղեցիկ և
բարի հասարակություն, որտեղ
իշխում է հարգանքը, սերը,
հոգացությունը ցանկացած
իրավիճակում:

<https://islamhouse.com/2768478>

- [ԻՍԼԱՄԱԿԱՆ](#)
[ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ](#)
[ԷԹԻԿԱՅԻ և ԱՐԺԵՔՆԵՐԻ](#)
[ԿԱՐԱՈՐՈՒԹՅՈՒՆԸ](#)
 - [ՄԱՐԴՈՒ](#)
[ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ](#)

ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵՉ

- ՍՏՐՈՒԿՆԵՐԻ և
ԱՇԽԾԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵՉ

- ՀԻՎԱՆԴՆԵՐԻ և
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔԻ
ՄԱՐԴԿԱՆՑ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

- ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒ
ՆՆԵՐԻ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԻՍԼԱՄԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵՉ

- ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵՉ
- ՇՐՉԱԿԱՆ
ՄԻՉԱՎԱՅՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵՉ
- ԷԹԻԿԱՅԻ և
ԱՐԺԵՔՆԵՐԻ
ԿԱՐԵՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵՉ
- ՄՏԱԾԵԼՈՒ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ

ՄԵՉ

- ԿԱՐԾԻՔՆԵՐԻ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ԻՍԼԱՄՈՒՄ
- ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ,
ՍՏՐՈՒԿՆԵՐԻ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ԻՍԼԱՄՈՒՄ
- ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ԻՍԼԱՄՈՒՄ
- ԱՄՈՒՍԻՆԸ, ԿԻՆԸ
ԻՍԼԱՄՈՒՄ....
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԵՐ

- ԵՐԵԽԱՆԵՐԸ
ԻՍԼԱՄՈՒՄ ...
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԵՐԸ
- ԾՆՈՂՆԵՐ,
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՍԼԱՄՈՒՄ
- ԱԶԳԱԿՑԱԿԱՆ
ԿԱՊԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒՄԸ
ԻՍԼԱՄՈՒՄ...
ԿԱՐԵՆՐՈՒԹՅՈՒՆԸ և
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
- ՄԱՀՍԵԴԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ
ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ,
ՆՐԱ

- ԿԱՐԵՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ և
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
- ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՀՍԵԴԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
- ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԻՍԼԱՄՈՒՄ... ՆՐԱ
ԿԱՐԵՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ և
ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԻՍԼԱՄՈՒՄ... ՆՐԱ
ԿԱՐԵՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ և
ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՆ
ՕՐԻՆԱԿՆԵՐԸ
- ՄԱՀՍԵԴԱԿԱՆՆԵՐԻ և
ՈՉ –
ՄԱՀՍԵԴԱԿԱՆՆԵՐԻ
(ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ,
ՀՐԵԱՆՆԵՐԻ,

ԿՌԱՊԱՇՏՆԵՐԻ և
ԱՅԼՆ).

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒ
ՆՆԵՐԸ

- ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ
ՄԱՀՍԵԴԱԿԱՆՆԵՐԻ և
ՈՉ-

ՄԱՀՍԵԴԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋև

- ՊԱՏԵՐԱԶՄԸ
ԻՍԼԱՄՈՒՄ

...ՊԱՏՃԱՌՆԵՐԸ և
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- ՊԱՏԵՐԱԶՄԻ ԷԹԻԿԱՆ
ԻՍԼԱՄՈՒՄ

- ՆՄԱՆԱՏԻՊ ԷԹԻԿԱՅԻ
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԱՌՈՒՄ Է
ՀԵՏևՅԱԼԸ.

ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ԷԹԻԿԱՅԻ և ԱՐԺԵՔՆԵՐԻ
ԿԱՐԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռադեբ Ալսարջենի

—TM

Թարգմանությունը:

EUROPEAN ISLAMIC
RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

հանձնաժողով: Ստուգող

Աբու Առամ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Ներածություն

Արևմտյան փիլիսոփա Նիցշեն ասաց. «Թուլությունը և անհաջողությունները պետք է անհայտանան. Առաջին սկզբունքը մեր սերն է առ մարդկությունը: Եվ նրանց պետք է օգնել»:[\[1\]](#)

Սակայն Իսլամի փիլիսոփայությունը և օրենքը երբեք չեն շեղվել արժեքներից և էթիկայից, որոնք ներկայացվել են իրավունքների շարքում, ներառելով ամբողջ

մարդկությունը, առանց
տարբերակելու գույնը, **ռասսան**
կամ լեզուն և նույնպես ներառում
է մարդկային վարքը միմյանց հետ
վարվելաձևում: Տվյալ արժեքները
և էթիկաները նույնպես
ներկայանում են պահպանել և
կիրառել այս իրավունքները, ըստ
Իսլամական օրենքի
իշխանության և հանցագործների
պատժի:

ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ ԻՍԼԱՄԻ ՏԵՍԱԿԵՏԸ

Իսլամը մարդուն հարգանքով է
վերաբերվում և մեծարում է
Ալլահի խոսքերով. «**Մենք**
պատվել ենք Ադամի որդիներին,

մատակարարել ենք նրանց
փոխադրամիջոց երկրի և ծովի
վրա, և տվել ենք նրանց
աջակցություն լավ և անբիծ
բաների և շնորհել ենք նրանց
հատուկ շնորհներ, մեր արարածի
մեծամասնությանը»: (Ալ-

Իսրա:70) Տվյալ

տեսակետը, Իսլամում մարդու
իրավունքներին հատուկ
բնորոշում և

առանձնահատկություններ է

տալիս: Տվյալ իրավունքների

Ամենակարևոր

առանձնահատկությունը

համապարփակությունն է: Նրանք
ներառում են քաղաքական,

տնտեսական, հասարակական և

մտավոր իրավունքներ: Նրանք

նույնպես ընդհանուր են
մահմեդականների և ոչ
մահմեդականների համար առանց
խտրականության գույնի,
ռասսաների կամ լեզուների:
Նրանք ենթակա չեն փոփոխման
կամ շեղման, **քանի որ դրանք
կապված են աշխարհների Տիրոջ
ուսմուքների հետ:**

Ալլահի Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**)
այս գեկուցեց իր հրաժեշտի
դիմումի մեջ, որը մարդու
իրավունքների համապարփակ
գեկույց էր, նա սասաց.

«...Կասկած չկա, ձեր արյունը և
ձեր ունեցվածքը սուրբ են
միմյանց համար, ինչպես սուրբ է
այս օրը ձեր, այս ամիսը ձեր, այս

քաղաքը ձեր, մինչ այն օրը, երբ
դուք կհանդիպեք ձեր

Տիրոջը...»:[\[2\]](#) Այս

մարգարեական դիմումը պնդում է
մի շարք իրավունքներ, որոնցից
ամենակարևորը արյան, գումարի,
[պատվի և այլնի սրբություններն](#)
են:

Նույնպես, ընդհանուր առմամբ,
Մարգարեն

([Խ.Ա.Ո.Ն](#))բարձրացնում է

մարդկային հոգին, պահպանելով
նրա մեծագույն իրավունքը, [որը](#)

[կոչվում է կյանքի իրավունք](#): Երբ

նրան հարցրեցին մեծ մեղքերի

մասին, Նա ([Խ.Ա.Ո.Ն](#)) ասաց.

«Բազմաստվածությունը և հոգու
սպանությունը...»:[\[3\]](#) «Հոգի»

բառը ընդհանրացված է, ներառելով ցանկացած հոգի, **ուս սպանել են առանց իրավունքի:**

Մարգարեն **(Խ.Ա.Ո.Ն)** ավելի հեռուն գնաց, երբ մարդուն կարգադրեց պահպանել իր իսկ կյանքը, **արգելելով ինքնասպանությունը:** Նա **(Խ.Ա.Ո.Ն)** ասաց. «Ով, դիտավորյալ զգում է իրեն սարից և սպանում է ինքն իրեն, կլինի Դժոխքի Կրակում, ընկնելով այնտեղ և բնակվելով այնտեղ հավերժ և ով թունավորում է ինքն իրեն, նա կրելիս կլինի իր թույնը իր ձեռքում և կըմպի այն Դժոխքի Կրակում, որտեղ նա կբնակվի հավերժ և ով իրեն կսպանի

երկաթյա զենքով, նա կկրի այդ զենքը իր ձեռքում և կդանակահարի իր որովայնը Դժոխքի Կրակում, որտեղ նա կբնակվի հավերժ»:[\[4\]](#)

Իսլամը արգելում է ցանկացած գործողություն, որը նվազեցնում է կյանքի իրավունքը, լինի ահաբեկում, [վիրավորանք կամ ծեծ](#): Հիշամ իբն Հակիմը ասաց, որ նա լսեց, թե Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ալլահը պիտի տանջի նրանց, ովքեր տանջում են մարդկանց աշխարհում»:[\[5\]](#)

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԼ

Մարդուն ընդհանուր պատվելուց
և արյան, պատվի և գումարի և
կյանքի իրավունքի
սրբությունները սահմանելուց
հետո, Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**)
նշում է մարդկանց միջև
գոյություն ունեցող
հավասարության իրավունքը, լինի
անհատների և խմբերի,
ռասսաների և
ազգերի, կառավարիչների և
հպատակների, **ղեկավարների և
ծառայողների միջև**: Այսպիսով
գոյություն չունեն ոչ մի
սահմանափակումներ կամ
բացառություններ, ոչ մի
տարբերություն արարների և ոչ
արարների օրենսդրության, կամ
սպիտակների և սևերի, **կամ**

կառավարիչների և հպատակների միջև: Փոխարենը մարդկանց տարբերակում են ըստ իրենց բարեպաշտության: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Օվ մարդիկ, Իրոք, ձեր Տերը մեկն է և ձեր հայրը մեկն է: Դուք բոլորդ պատկանում եք մեկ նախնու, Ադամին, և Ադամին կավից են արարել: Իրոք, Ալլահի տեսանկյունից ձեր միջի ամենավեհը նա է, ով ամենաբարեպաշտն է: Գոյություն չունի ոչ մի գերադասություն արաբի և ոչ արաբի միջև, բացառությամբ բարեպաշտության»: [6] Եկեք դիտենք, թե ինչպես է վարվել Մարգարեն հավասարության

սկզբունքի հետ, որպեսզի մենք
գիտակցենք նրա մեծությունը:
Աբու Ումամահն հաղորդեց. Աբու
Դհարը ծաղրեց Բիլալին մորը և
ասաց. Դու, սևամորթի որդի:
Բիլալը գնաց Ալլահի Մարգարեյի
(Խ.Ա.Ո.Ն) մոտ և ասաց նրան:
Մարգարեն բարկացավ: Աբու
Դհարը, կատարվածից
անտեղյակ, եկավ: Մարգարեն իր
դեմքը շրջեց Աբու Դհարից: Աբու
Դհարը ասաց. Պետք է որևէ բան
լինի, որ դու շրջում ես քո դեմքը
ինձանից: Մարգարեն ասաց.
«Արդյո՞ք դու ծաղրել ես Բիլալին
մորը» և այնուհետ ասաց. «Մեկի
անունով, ով հայտնել է գիրքը
Մուհամմեդին- կամ որևէ այլ
երդում, նա ցանկանում է, -Աստծո

կամոք մեկը գերադասելի չէ
մյուսից, բացառությամբ
աշխատանքից :Դուք բոլորդ
հավասար եք»: [7]

ԱՐԴԱՐԱԴՒԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄՈՒՄ

Հավասարության հետ կապված
մեկ այլ իրավունքը կոչվում է
արդարության իրավունք: Այս
առումով գլուխգործոց է այն, երբ
Մարգարեն ասաց Ուսամա իբն
Չեյդին, երբ վերջինս ցանկացավ
բարեխոսել գողությունն արած
Մաքգոլմի կնոջը. «Ալլահով, եթե
Ֆարթիման, Մուհամմեդի դուստրը
գողությունն աներ, ես կկտրեյի
նրա ձեռքը»: [8]

Նույնպես Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն) արգելել է որևէ մեկի ինքնապաշտպանության իրավունքի բռնագրավումը, որպես արդարության դիտարկում: Նա ասաց. «...Անկասկած, նա, պարտատերը ունի իրավունք պահանջել իր պարտքը կոպտորեն...:»[9] Նա ասաց նրանց, ովքեր ստանձնել են կառավարման և դատական իշխանությունը. «...Երբ երկու հայցվոր նստում են քո դիմաց, մի որոշիր մինչ դու չլսես, թե ինչ պետք է ասի մեկը, ինչպես դու լսեցիր, թե ինչ պետք է ասեր առաջինը, քանի որ այդ լավագույնն է, որ դուք հստակ

պատկերացում ունենաք
լավագույն որոշման:» [\[10\]](#)

ԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ԻՍԼԱՄՈՒՄ

Բավարարության իրավունքը
եզակի է, որը սահմանել է
Իսլամական Օրենքը: Որևէ
դրական համակարգ կամ մարդու
իրավունքների կանոնադրություն,
մինչ այդ չի սահմանել այն:

Բավարարության իրավունքը
նշանակում է, որ յուրաքանչյուրը
պետք է ապրի Իսլամական
պետության համապատասխան
կյանքի պայմանի որոշմամբ, որ
նա պետք է առաջնորդի պարկեշտ
կյանք, **ունենալով ապրելու**

համապատասխան չափանիշներ:
Այս իրավունքը տարբեր է
դատարկ սպառողական
մակարդակից, նախատեսված
դրական համակարգերում, որը
նշանակում է նվազագույն
սահմանաչափ, որը պահպանում է
կյանքը:[\[11\]](#)

Իրավունքը դեպի
բավարարություն, կատարվում է
աշխատանքի միջոցով: Եթե որևէ
մեկը ի վիճակի չէ կատարել այն,
Չաքյաթը կարող է անել և, եթե
Չաքյաթը ի վիճակի չէ վճարել
աղքատին, պետության բյուջեն
պետք է վճարի:
Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն)
արտահայտեց այս, երբ նա

ասաց. «...նա, ով ունեցվածք է թողնում, որը իր ընտանիքի համար է և նա, ով մահկանացուն է կնքում ունենալով պարտք կամ թողնում է անօգնական զավակներ, նրա պարտքի վճարման և երեխաների դաստիարակության պատասխանատվությունը ընկնում է ինձ վրա»:[\[12\]](#) Նա պնդեց այս իրավունքը, երբ նա ասաց. «Մեկը, ով քուն է մտնում լի ստամոքսով, իմանալով, որ իր հարևանը սոված է, չի հավատում ինձ»:[\[13\]](#) Լուղիհնգ Աշրաթացին (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Երբ աշրաթիցիների մոտ նվազում էր պարենը արշավների ժամանակ կամ նվազում էր իրենց

երեխաները սնունդը
Մեղինայում, նրանք հավաքում
էին ինչ որ կար նրանց հետ կտորի
մեջ և այնուհետ բաժանում էին
հավասարապես մեկ ափսեից:
Նրանք ինձանից են և ես
նրանցից»:[\[14\]](#)

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ և
ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մարդու իրավունքները հասնում
են իրենց լավագույն
գազաթակետին, երբ նրանք
կապված են քաղաքացիների և
ռազմագերիների իրավունքների
հետ: Պատերազմի
ժամանակ, վրեժխնդրության և

պատժի ոգին ավելի է գերիշխում,
 քան մարդկության կամ
 կարեկցանքի ոգին: Սակայն
 Իսլամը ունի մարդկային
 մոտեցում, որը կարեկցանք է
 հրահանգում և դրան Մարգարեն
 (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մի սպանեք
 նորածիններին, կանանց և
 ծերերին»: [\[15\]](#)

Հետևյալ իրավունքները միայն մի
 քանիսն են, որոնք Իսլամը
 ընդունել և որոշել է որպես
 ամբողջ մուսուլմանի մարդու
 իրավունքներ:

Մեծամասնությունը արտացոլում
 են մարդկության տեսակետը, որը
 հանդիսանում է մահմեդական
 քաղաքակրթության ոգին:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՍԱԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՉ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իսլամը կնոջը ապահովում է հոգացությունը և ուշադրությամբ, պատվով և լավ վերաբերմունքով, բարձրացնելով նրա կարգավիճակը, լինի նա դուստր, կին, քույր կամ մայր: Իսլամը սահմանում է, որ և կանայք և տղամարդիկ մեկ ծագում ունեն: Ուստի, կանայք և տղամարդիկ մարդկայնորեն հավասար են: Ամենաբարձրյալ Ալլահն ասաց. «Օվ, մարդկությունն ակնածանք տաժեք ձեր Պահապան Տիրոջը,

ով արարել է ձեզ մեկ անհատից,
 արարել է նմանատիպ բնույթի,
 Նրա կողակիցը և նրանցից
 երկուսից, ցրված ինչպես սերմեր,
 անհամար տղամարդիկ և կանայք
 »: (Ալ-Նիսաա:1) Շատ այլ
 տարբերակներ ցույց են տալիս, որ
 Իսլամը արմատախիլ է անում
 տղամարդկանց և կանանց միջև
 գոյություն ունեցող
 տարբերությունը ի շահ
 մարդկային ընդհանուր արժեքի:

ԿՆՈՋ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
 ԻՍԼԱՄՈՒՄ

Այս սկզբունքը հիշում և
 հավանություն չէր տալիս
 Ջահիլիյայի և նախորդ ազգերի

կանանց կարգավիճակի սովորույթներին: Իսլամը եկավ պաշտպանելու կնոջը և դրեց նրան այն կարգավիճակում, որին նա չէր կարող հասնել հին և նախորդ ազգերի մեջ: Տասնչորս դար առաջ, որպես մայր, քույր կին և դուստր, Իսլամը կնոջը նշանակեց իրավունքներ, որոնց ստանալու համար արևմտյան կանայք մինչ այժմ ապարդյուն պայքարում են:

Իսլամը սահմանում է, որ կանայք և տղամարդիկ հավասար են կարգավիճակի և հեղինակություն մեջ և որ ոչինչ չի նսեմացնում կնոջը, այն պատճառով, որ նրանք կին են: Այս առումով, Մարգարեն

(Խ.ԱՂ.Ն) հաստատեց մի կարևոր կանոն, երբ նա ասաց. «Կանայք տղամարդկանց գործընկերներն են»:[\[16\]](#) Նա (Խ.Ա.Ո.Ն) միշտ հորդորում էր մահմեդականներին հոգ տանել կանանց: Նա ասաց իր ուղեկցորդներին. «Ես հորդորում եմ ձեզ հոգ տանել կանանց»:[\[17\]](#) Նա կրկնեց իր խորհուրդը հրաժեշտի ուխտագնացության ընթացքում, երբ նա դիմեց իր ազգի հազարավոր մարդկանց:

ԿՆՈՉ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ՉԱՀԻԼԻՅԱՅՈՒՄ

Եթե մենք ցանկանում ենք տարբերել կանոնները և այուները, որոնք բերել է Իսլամը բարձրացնելու և պատվելու կնոջը, ապա սկզբում մենք պետք է գիտակցենք հնագույն և ժամանակակից [18] ազգերի կնոջ կարգավիճակը, որպեսզի տեսնենք իրական խավարը, որը նա փորձել է և մինչ այժմ փորձում է: Այնուհետ մենք կգտնենք կնոջ կարգավիճակի իրականությունը, Իսլամի ուսմունքի և Իսլամական քաղաքակրթության ներքո:

Արաբները –ինչպես նշել է Գլուխ 1-ը- սովորություն ունեին կենդանի թաղել իրենց դուստրերին և զրկել նրանց

կյանքի իրավունքից, սակայն,
 Փառահեղ Ղուրանը
 քրեականացրեց և արգելեց այս
 գործողությունը, ինչպես
 Ամենաբարձրյալ Ալլահն ասաց.

«Երբ իզական սեռի նորածնին
 կենդանի թաղված հարցնում են
 որ մեղքի համար են նրան
 սպանել»: (Ալ-Թակուիթ :8,9)

Բացի այդ, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)
 այն դարձրեց մեծագույն
 մեղքերից մեկը: Իբն Մասուդը,
 թող Ալլահը գոհանա նրանով,
 հաղորդեց. Ես հարցրեցի Ալլահի
 Մարգարեին (Խ.Ա.Ո.Ն). Ո՞ր
 մեղքն է ամենամեծը: Նա ասաց.

«Մրցակից ստեղծելը Ալլահին,
 չնայած միայն Նա է արարել ձեզ»:
 Ես ասացի. Ո՞րն է հաջորդը: Նա

ասաց. «Սպանել ձեր որդուն,
որովհետև նա պետք է կհասի ձեր
սնունդը ձեզ հետ »: Ես այնուհետ
հարցրեցի. **Ո՞րն է հաջորդը:** Նա
ասաց. «Գործել անօրինական
սեռական հարաբերություն ձեր
հարևանի կնոջ հետ»:[\[19\]](#)

ԿՆՈՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԻՍԼԱՄՈՒՄ

Իսլամը չի դադարում պահպանել
կնոջ միայն աշխարհ գալու
իրավունքը, **սակայն նույնպես կոչ
է անում բարի վերաբերմունք վաղ
տարիքից սկսած: Մարգարեն
(Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ով
պատասխանատու է,
(փորձության մեջ է), իր**

դուստրերի համար և վերաբերվում է նրանց առաքինաբար, **ապա նրանք որպես վահան հանդես կգան նրա համար Դժոխքի Կրակից»**:[\[20\]](#) Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**)նույնպես պատվիրեց կրթել նրանց:Նա ասաց.«Ցանկացած տղամարդ, ով դուստր ունի, ում նա կրթում է պատշաճ, ուսուցանում է լավ բարքեր ... կստանա կրկնակի պարգև»:[\[21\]](#) Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) սովորություն ուներ օր հատկացնել կանանց համար, որպեսզի խորհուրդ տար նրանց, հիշեցնեի նրանց և պատվիրեի նրանց հնազանդվել Ամենաբարձրյալ Ալլահին:[\[22\]](#)

Երբ դուստրը մեծանում և
 դառնում է չափահաս, Իսլամը
 նրան իրավունք է տալիս
 ընդունել, **կամ մերժել փեսացուին:**
 Նրան չպետք է պարտադրել
 ընդունել տղամարդու, **ուն նա չի**
ցանկանում: Այս առումով,
 Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.
 «Կինը, ով մինչ այդ ամուսնացած
 է եղել, Թայյիբ, ավելի շատ
 իրավունքներ ունի իր անձի
 հանդեպ, **քան նրա խնամակալը:**
 Եվ կույսին նույնպես պետք է
 հարցնել և նրա լռությունը
 ենթադրում է նրա
 համաձայնությունը:» **[23]** Նա
 նույնպես ասաց. «Ծառայող կնոջը
 չպետք է ամուսնացնել, առանց
 խորհրդակցելու նրան և կույսին

նույնպես չպետք է ամուսնացնել, միայն նրա թույլտվությունից հետո»: Մարդիկ հարցրեցին, «Օվ Ալլահի Մարգարե, ինչպե՞ս ենք մենք կարող իմանալ նրա թույլտվության մասին»: Նա ասաց. «Նրա լռությունը, ցույց է տալիս նրա թույլտվությունը:» [24]

Կնոջ ամուսնությունից հետո, Իսլամը լավ վերաբերմունք կոչ է անում նրան, քանի որ կնոջ նկատմամբ բարի վերաբերմունքը նշանակում է տղամարդու առաքինությունը և բարությունը: Օրինակ, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հրապուրանքով ասաց. «Եթե տղամարդը ջուր է տալիս իր

կնոջը ընպելու, նա պարզևատրվում է»:[\[25\]](#) Եվ զգուշացնելով ասաց. «Օվ Ալլահ, ես մեղսավոր եմ հայտարարում նրան, ով չի պաշտպանում երկու թուլյերի իրավունքները, որոնց կոչում են որբ և կին»:[\[26\]](#)

Այս առումով, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հանդիսանում էր գործնական օրինակ: Նա շատ բարի և մեղմ էր իր ընտանիքի հետ: Ալ-Ասուլադ իբն Յազիդ Ալ-Նակիլին հաղորդեց, որ հարցրեց Աիշային, (թող Ալլահը գոհանա նրանով). «Ի՞նչ էր սովորաբար անում Մարգարեն իր տանը»: Նա պատասխանեց. «Նա զբաղված էր լինում ծառայելու իր ընտանիքին

և երբ գալիս էր աղոթքի
 ժամանակը, նա գնում էր աղոթք
 անելու»:[\[27\]](#)

Եթե կինը ատում է իր ամուսնուն
 և չի կարող ապրել նրա հետ,
 Իսլամը նրան իրավունքն է տալիս
 լքել ամուսնուն, Կհուլի միջոցով
 (ամուսնալուծություն կնոջ
 ցանկությամբ): Իբն Աբասը
 հաղորդում է, որ Թաբիթ իբն
 Քեյսի կինը եկավ Մարգարեյի
 (Խ.Ա.Ո.Ն) մոտ և ասաց. «Օվ,
 Ալլահի Մարգարե, ես չեմ
 մեղադրում Թաբիթին իր
 բնավարության արատների կամ
 նրա կրոնի համար, սակայն, ես,
 լինելով մահմեդական, չեմ
 ցանկանում վարվել ոչ

իսլամական կերպով, եթե ես
մնամ նրա հետ»: Ալլահի
Մարգարեն ասաց նրան. «Արդյո՞ք
դու կվերադարձնես այգին, որը քո
ամուսինը տվել է քեզ որպես
օժիտ»: Նա ասաց. «Այո»: Այնուհետ
նա վերադարձրեց այգին
ամուսնուն և Մարգարեն խնդրեց
նրան ամուսնալուծվել կնոջից: [28]

Լրացնելով վերոհիշյալը, պետք է
ասել, որ Իսլամը ապահովում է
կնոջ նյութական անկախությունը
այնպես, **ինչպես տղամարդունը**:
Այսպիսով նա կարող է վաճառել,
գնել, վարձով տալ, վարձակալել,
արտոնել և նվիրաբերել և չի լինի
ոչ մի արգելք նրան, այնքան
ժամանակ, **որքան նա խելամիտ և**

բանական է: Այս ելնում է Ալլահի խոսքերից. «Եթե այնուհետ դուք գտնեք հնչեղ դատաստան նրանց մեջ, տվեք իրենց ունեցվածքը նրանց»: (Ալ-Նիսա :6)

Երբ Ում Հանի բինթ Աբու Թալիբը ապաստան տվեց անհավատ տղամարդուն և նրա եղբայրը, Ալին, թող Ալլահը գոհանա նրանով, պնդեց սպանել նրան, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) որոշում կայացրեց և ասաց. «Օվ, Ում Հանի, մենք ապաստան կտանք նրան, ում դու ես տվել ապաստան»: [29] Այսպիսով նա, կնոջը իրավունք տվեց ապաստան շնորհել ոչ մահմեդականներիին

պատերազմի և խաղաղ
պայմանների ընթացքում:

Ուստի, մահմեդական կանայք
պարկեշտ են, սիրելի, **հպարտ և**
պաշտպանված Իսլամի
ուսմունքների և առաքինի
Իսլամական քաղաքակրթության
ներքո:

ՄՏՐՈՒԿՆԵՐԻ և
ԱՇԽՃԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՉ

ՄՏՐՈՒԿՆԵՐԻ և
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՆԵՐԸ ԻՍԼԱՄՈՒՄ

Իսլամը պատվում և հոգ է տանում ստրուկներին և ծառայողներին և պատմության մեջ առաջին անգամ ճանաչում է նրանց իրավունքները- որոշ հին օրենքներում աշխատանքը նշանակեց ստրկությունը և կախվածություն, **մինչդեռ մյուսներում նշանակեց նվաստացում և դեգրադացիա – նպատակ ունենալով տնօրինել հասարակական արդարությունը և ապահովել արժանի կյանք նրանց համար: Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կենսագրությունը Իսլամական քաղաքակրթության մեծության լավագույն վկայությունն էր, թե ինչպես է այն դիտում ստրուկներին և**

աշխատողներին, քանի որ նա
(**Խ.Ա.Ո.Ն**) ճանաչում էր նրանց
իրավունքները:

Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) կոչ էր արել
գործատուներին մարդասիրաբար
և քաղաքավարությամբ
վերաբերել իրենց
ստրուկներին: Նա նույնպես կոչ
արեց գլխավոր նրանց, **լինել բարի և
ուժեղից վեր աշխատանք չտալ:**
Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) ասաց.
«Ձեր ստրուկները ձեր
եղբայրներն են և Ալլահը դրել է
նրանց ձեր հրամանների ներքո:
Այսպիսով, ով ունի եղբայր իր
հրամանների ներքո, պետք է տա
նրան այն սննդից, որից նա է
սնվում և այն հագուստից, **որը նա**

է կրում: Մի խնդրեք նրանց,
ստրուկներին անել բաներ իրենց
ուժերից վեր և եթե դուք այդ
անում եք, ապա օգնեք
նրանց»: [30] Այսպիսով
Մարգարեյի «Ձեր ստրուկները
ձեր եղբայրեն
են» հայտարարությունը, եկավ
բարձրացնելու ստրուկների
աստիճանը մինչ եղբոր
աստիճանի, մի բան, որը երբեք
որևէ քաղաքակրթության մեջ
տեղի չէր ունեցել:

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես
գործատուներին
պարտավորեցրեց վճարել
աշխատողներին և ստրուկներին
իրենց ջանքերի համար, առանց

անարդարության և հետաձգման:
Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Տուր
ծառային նրա վարձը, մինչ
կչորանա նրա քրտինքը»:[\[31\]](#)

Իսլամը զգուշացնում է
անարդարությունը ընդդեմ
աշխատողների:
Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն) մեջբերեց
Ալլահին, Փառքի Տիրոջը,
Ամենաբարձրյալին ասելով.
«Ալլահն ասաց, Ես դեմ կլինեմ
երեք անձանց Հարության Օրը... և
նա, ով վարձում է աշխատող և
ստանում է լիարժեք
աշխատանք, սակայն չի վճարում
նրան իր աշխատավարձը»:[\[32\]](#)
Այսպիսով, նա, ով աշխատողին
կամ ստրուկին

անարդարացիորեն է վերաբերվում, պետք է գիտակցի, որ Ալլահը դիտում է նրան և Հարության Օրը կլինի նրա դատավորը:

Գործատուն աշխատողին չպետք է ծանրաբեռնի, որը կարող է վնասել նրանց առողջությանը և որը ստիպում է աշխատելու մինչ անունակություն: Այս առումով, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Եթե դուք նվազեցնեք ստրուկների խնդիրները, պարզև կավելացվի ձեր արարքների գրքում, Հարության Օրը»: [33]

Ստրուկին մեղմությամբ վերաբերվելու իրավունքը, Իսլամական Օրենքի

խորհրդանիշն է: Այս առումով, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) կոչ է անում իր ազգին ասելով. «Նա, ով սնվում է իր ծառայի հետ, ավանակ է հեծնում շուկայում և կապում է նրա ոչխարը և կթում է այն, հպարտությունն չէ»: [34]

Քանի որ Մարգարեյի կյանքը հանդիսանում է իր բոլոր խոսքերի կիրառությունը, Աիշան, (թող Ալլահը գոհանա նրանով), հաղորդեց, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) երբեք ձեռք չի բարձրացրել որևէ մեկին, ոչ կնոջ ոչ էլ ծառայի...» [35]

Աբու Մասուդ ալ- Անսարին հաղորդեց. Երբ ես հարվածում էի

իմ ծառային, ես իմ ետևից ձայն լսեցի, որը ասում էր. «Աբու Մասուդ, հիշիր, որ Ալլահը ավելի մեծ իշխանություն ունի քեզ վրա, քան դու նրա»: Ես շրջվեցի և տեսա Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն): Ես ասացի. Ալլահի Մարգարե, ես նրան ազատ եմ արձակել հանուն Ալլահի: Այնուհետև նա ասաց. «Եթե դու այդ չանեիր, դարպասները Գժոխքի բացված կլինեին քեզ համար, կամ կրակը կայրեր քեզ»:[\[36\]](#)

Ծեծը, ոտքով կամ ձեռքով հարվածելը ստրուկների նախատինքն է, որը ժխտում է Ալլահը և Նրա Մարգարեն:

Այսպիսով, դաժան տիրոջ
լավագույն պատիժը նրան
անմիջապես իր ստրուկներից
զրկելն է և սա հանդիսանում է
Իսլամի մեծությունը և
Իսլամական
քաղաքակրթությունը:

Տալով ճշմարիտ
վկայություն, Մարգարեյի
ստրուկը, Անաս իբն Մալիքը
հաղորդեց. մարդկանց շրջանում
Ալլահի Մարգարեն **(Խ.Ա.Ո.Ն)**
ունեի լավագույն դիրքորոշումը:
Մեկ օր նա ինձ
հանձնարարության ուղարկեց և
ես ասացի Ալլահի անունով, **ես չեմ
գնա:** Ամեն դեպքում, ես մտադիր
էի անել այնպես, ինչպես

պատվիրել է ինձ Ալլահի
 Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն): Ես դուրս
 եկա, մինչ ես հանդիպեցի
 երեխաների, **ուվքեր խաղում էին
 փողոցում:** Ի դեպ, Ալլահի
 Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) եկավ
 այնտեղ և բռնեց ինձ պարանոցի
 ետևի մասից: Երբ ես նայեցի
 նրան, տեսա նրան ժպտալիս և նա
 ասաց. «**Ունայս արդյո՞ք դու
 գնացել ես այնտեղ, որտեղ ես եմ
 պատվիրել քեզ գնալ»:** Ես ասացի.
 Ալլահի Մարգարե, **այո ես գնում
 եմ:** Այնուհետ Անասը ասաց. Ես
 ծառայեցի նրան յոթ կամ ինը
 տարի, սակայն, ես չեմ հիշում, որ
 նա երբևէ ասել է ինձ որևէ բան,
 որը ես արել եմ, թե ինչու եմ այդ
 արել, կամ որևէ բանի մասին, որը

ես չեմ արել, թե ինչու ես չեմ արել այդ»:[\[37\]](#)

Ավելին, Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) այն աստիճան էր հետաքրքրված իր ծառաների հոգացուլթյամբ, որ նա կոչ էր անում նրանց ամուսնանալ: Ռաբիահ իբն Քար Ալ- Ասլամին հաղորդեց, երբ ես ծառայում էի Մարգարեյին (**Խ.Ա.Ո.Ն**), նա կանչեց ինձ և հարցրեց, «Արդյո՞ք դու չես ցանկանում ամուսնանալ, **Ռաբիահ**»: Ես ասացի. Ես չեմ ցանկանում, որ որևէ բան ինձ շեղի իմ ծառայությունից: Ավելին, ես իմ կնոջը օժիտ տալու ոչինչ չունեմ, կամ որևէ վայր, որտեղ ես կարող եմ օթևան տալ կնոջը: Մարգարեն լուռ մնաց: Երբ նա

կրին ինձ տեսավ
 հարցրեց. «Արդյո՞ք դու չես
 ցանկանում ամուսնանալ
 Ռաբիահ»: Ես տվեցի նախկին
 նույն պատասխանը: Կրկին ինձ
 թույլ տալով, ես զղջացի իմ
 ասածի համար և կշտամբեցի ինձ.
 «Անեծք քեզ Ռաբիահ: Ալլահի
 անունով, Մարգարեն ավելի լավ
 գիտի քան դու, թե ինչ է լավ քեզ
 համար այս աշխարհում և
 հետագա և նա նույնպես ավելի
 լավ գիտի, քան դու, թե ինչ դու
 ունես: Ալլահի անունով, եթե
 Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) կրկին ինձ
 հարցնի ամուսնության մասին, ես
 դրական պատասխան
 կտամ»: Կարճ ժամանակ
 անց, Մարգարեն կրկին հարցրեց

ինձ, «Արդյո՞ք դու չես ցանկանում
ամուսնանալ Ռաբիահ»: Oh,
այո, Ալլահի Մրագարե, ես
պատասխանեցի, սակայն ով
կամուսնանա ինձ հետ, երբ ես այն
իրավիճակում եմ, **որ դու
գիտես**: Այնուհետ նա ասաց. Գնա
այսինչի ընտանիք, ով Ալ-Անսար
ընտանիքից է ...» [\[38\]](#)

Ստրուկների և աշխատավորների
վերաբերմունքով, Իսլամական
քաղաքակրթության մեծություներ
այնքան ակնհայտ դարձավ, երբ
մենք տեսանք, որ Մարգարեն
(**Խ.Ա.Ո.Ն**) ներառում էր
անհավատներին: Մի երիտասարդ
հրեա պատանի ծառայում էր
Մարգարեյին (**Խ.Ա.Ո.Ն**) և նա

հիվանդացավ: Այսպիսով
 Մարգարեն գնաց նրան
 այցելության: Նա նստեց նրա
 գլխավերևում և խնդրեց նրան
 ընդունել Իսլամ: Տղան նայեց իր
 հորը, ով նստած էր այնտեղ;
 վերջինս ասաց նրան;
 Հնազանդվիր Աբու-ալ-Քասիմին
 և պատանին ընդունեց
 Իսլամ: Մարգարեն
 (Խ.Ա.Ո.Ն) դուրս եկավ ասելով.
 «Փառք Ալլահին. Ով փրկեց
 պատանուն Դժոխքի
 կրակից»: [39]

Հետևյալը ստրուկների և
 աշխատավորների մի քանի
 իրավունքներն են, որոնք
 համախմբել է Իսլամը և կիրառել է

Իսլամի Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**)
խոսքով և արարքով այն
ժամանակ, երբ ոչնչից տեղյակ
չէին, բացառությամբ
անարդարության, **ճնշման և**
բռնապետության: Այս իսկապես
արտացոլում է մեծություն:

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ և ՀԱՏՈՒԿ
ԿԱՐԻՔԻ ՄԱՐԴԿԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ներածություն

Իսլամը և իսլամական
քաղաքակրթությունը
յուրահատուկ մոտեցում ունի
հիվանդների և հատուկ կարիք
ունեցող մարդկանց
նկատմամբ: Այս մոտեցումը

սկսվում է նվազեցնելով նրանց
որոշ օրինական
պարտավորվածությունները,
ինչպես հայտնում են
Ամենաբարձրյալ, Ամենագոր
Ալլահի խոսքերը. «Ոչ մի մեղք
գոյություն չունի կուլյրի, ոչ էլ
բնածին կադի, ոչ էլ
հիվանդությանը չարչարվածի
վրա»: (Ալ-Նուռ :61), (Ալ- Ֆաթհ
:17) Մոտեցումը ավարտվում է
հույսով և նրանց ֆիզիկական և
հոգեբանական իրավունքների
պահպանությամբ:

ՄԱՐԳԱՐԵՅԻ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) սովորություն ուներ շտապ այցելել հիվանդին, եթե նա լսում էր հիվանդության մասին, չնայած, որ Մարգարեն շատ զբաղված էր և ուներ շատ մտահոգություններ: Նրա այցը ստիպողական կամ շինծու չէր, սակայն նա պարտավորվածություն էր զգում հիվանդների նկատմամբ, ինչու չէ՞քանի որ նա (Խ.Ա.Ո.Ն) հիվանդի այցելությունը դարձրել է վերջինների իրավունքները: Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մահմեդականի իրավունքը մեկ այլ մահմեդականի հանդեպ հինգն են....այցելություն հիվանդին»: [40]

Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) ուսուցիչ և օրինակ էր: Նա սովորություն ուներ մեղմելու հիվանդի ճգնաժամը և հիվանդությունը, արտահայտելով իր կարեկցանքը, հոգատարությունը և սերը արհեստականորեն, **ուստի հիվանդին երջանկացնում էր**: Այս առումով, Աբդուլլահ իբն Ումարը հաղորդեց. Սաադ իբն Ուբադահը հիվանդացավ և Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) Աբդ-ալ-Ռահման իբն Աուֆի, Սաադ իբն Աբու-Ուաքաասի և Աբդուլլահ իբն Մասուդի, թող Ալլահը գոհանա նրանցով, **այցելեց նրան տեղեկանալու իր առողջության մասին**: Երբ նա եկավ նրա մոտ, տեսավ նրան շրջապատված

ընտանիքով և նա հարցրեց,
 «Արդյո՞ք նա կնքել է
 մահկանացուն»: Նրանք ասացին.
 «Ոչ, օվ Ալլահի Մարգարե»: Մարգարեն հեկեկաց և երբ
 մարդիկ տեսան Ալլահի
 հեկեկացող Մարգարեյին
 (Խ.Ա.Ո.Ն) նրանք բոլորը
 հեկեկացին: Նա ասաց. «Արդյո՞ք
 դուք լսում եք, Ալլահը չի
 պատժում արցունք թափելու
 համար, ոչ էլ սրտի վշտի, սակայն
 նա պատժում կամ
 պարզևատրում է Իր
 Գթասրտությունը սրան»: Նա
 նշում է իր լեզուն»: [\[41\]](#)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)
 սովորություն ուներ նաև աղոթք

անել հիվանդների համար և
ավետիս քերել նրանց, որ նրանք
կպարզևատրվեն հիվանդության
դիմաց, որը չարչարում է նրանց,
ուստի նրանց հանգստացնում և
տալիս բավարարության
զգացում: Ումն Ալ-Ալան[42]
հաղորդեց. Ալլահի Մարգարեն
(Խ.Ա.Ո.Ն) այցելեց ինձ, երբ ես
հիվանդ էի: Նա ասաց. «Եղիբ
ուրախ Ում Ալ- Ալա, քանի որ
Ալլահը հեռացնում է
մահմեդականի մեղքերը իր
հիվանդությանը, ինչպես կրակը
հեռացնում է ոսկու և արծաթի
մնացորդները»:[43]

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ձգտում էր
թերևսացնել հիվանդներին և այն

հեշտացնել նրանց համար: Այս առումով Չաբիբ իբն Աբդուլլահը, (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. «Մենք գնացել էինք ճանապարհորդության և մեզանից մեկը վիրավորվեց: Ավելի ուշ, նա երազխաբություն ունեցավ: Նա հարցրեց իր ուղեկցորդներին, «Արդյո՞ք, նա կարող է տայամմում կատարել, այսինքն տրորել ձեռքերը և ոտքերը փոշով»: Նրանք ասացին. «Ոչ, եթե դու ջուր ունես»: Նա դուստ, լոզանք, արեց և կնքեց մահկանացուն: Երբ նրանք եկան Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ, նրանք հաղորդեցին պատահածը: Նա ասաց. «Նրանք

սպանեցին նրան; Ալլահը կսպանի
 նրանց: Արդյո՞ք չեք կարող
 հարցնել, **երես դուք տեղյակ չեք:**
 Տգետ անձի փրկությունը
 հարցումն է: Նա կարող էր
 թայամնում անել և կարող էր ջուր
 զցել վերքին կամ փաթաթել այն
 որևէ բանով և սրբել այդ
 հատվածը և լվանար իր մարմնի
 մնացած հատվածը»: [\[44\]](#)

Ավելին, Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**)
 սովորություն ուներ տեսնել
 հիվանդների կարիքները և քայլել
 նրանց հետ, **մինչ պահանջների
 բավարարելը:** Մի կին, ով ուներ
 մասնակի հոգեկան խանգարում,
 մեկ օր եկավ նրա մոտ և ասաց.
 «Օվ Ալլահի Մարգարե, ես որևէ

բան եմ ցանկանում քեզանից»:
 Նա ասաց. «Օվ այսինչի մայր, տես
 թե փողոցի որ հատվածում դու
 կցանկանաս կանգնել և զրուցել,
 այնպես, որ ես ի վիճակի լինեմ
 տեսնել քո կարիքները»: Նա
 ճանապարհի մի կողմը կանգնեց
 նրա հետ, մինչ նա ստացավ իր
 ցանկացածը: [45]

Նույնպես, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)
 հիվանդներին և հատուկ
 կարիքավորներին դեղորայքի
 իրավունք ընձեռնեց, քանի որ
 մարմնի ներքին և արտաքին
 ապահովությունը Իսլամի
 նպատակն է: Երբ անապատի
 արարները հարցրեցին
 Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն)

դեղորայքի մասին, նա
 պատասխանեց «Օգտվեք
 դեղորայքային բուժումից, քանի
 որ Ալլահը չի արարել ախտ,
 առանց դրա բուժման միջոց
 նշանակելու, բացառությամբ մեկ
 ախտի, որը կոչվում է
 ծերություն»:[\[46\]](#)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) չի մերժում
 Մահմեդական կնոջը բուժել
 մահմեդական տղամարդուն: Նա
 թույլատրեց Ռուֆայդային, Ասլա
 ցեդի կնոջը, բուժել Սաադ իբն
 Մուլազին, երբ նա վիրավորվել էր
 Ալ-Քանդաք ճակատամարտի
 ժամանակ: Նա, (Թող Ալլահը
 գոհանա նրանով), սովորություն
 ուներ բուժել վիրավորներին և

Ծառայել կարիքավոր մահմեդականներին:[\[47\]](#)

Գործնականորեն, Մարգարեն
(**Խ.Ա.Ո.Ն**) դրականորեն էր
վերաբերվում Ամր իբն Ալ-
Ջամուհին: Ամրը հատուկ
կարիքով մարդ էր: Նա կաղում էր:
Նա ուներ չորս որդի, ովքեր
Մարգարեյի (**Խ.Ա.Ո.Ն**) հետ
մասնակցում էին
ճակատամարտերին: Ուլուդ
ճակատամարտի օրը, Ամրը
ցանկություն հայտնեց գնալ,
սակայն նրա որդիները նրան
խորհուրդ տվեցին մնալ տանը:
Նա գնաց Մարգարեյի (**Խ.Ա.Ո.Ն**)
մոտ և ասաց նրան, որ իր
որդիները ցանկանում են կանխել

նրա մասնակցությունը
ճակատամարտին: «Սակայն,
Ալլահի անունով, ես ցանկանում
եմ նահատակվել այնպես, որ ես ի
վիճակի լինեմ կաղ զբոսնել
Դրախտում», **ասաց**

Ամրը: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)
պատասխանեց. «Ալլահը
Ջիհադը, սուրբ պայքարը, չի
պարտադրել քեզ»; և նրա
որդիներին նա ասաց. «Ո՞րն է
խնդիրը, եթե դուք թույլ տաք
նրան գնալ: Հնարավոր է որ
Ալլահը օրհնի նրան
նահատակությամբ»: **Ամրը**
Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հետ
Ուհուդի օրը գնաց
ճակատամարտ և այնտեղ կնքեց
իր մահկանացուն: Այնուհետ,

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.
«Ալլահի անունով, ձեր մեջ
գոյություն ունեն այնպիսիք,
ովքեր եթե երդվեն Ալլահի
անունով, Նա կլրացնի նրանց
աղոթքները, նրանցից է Ամր իբն
Ալ-Չամուհր: Ես տեսնում եմ
նրան կաղ ոտքով Դրախտում
զբոսնելիս»:[\[48\]](#)

Սա է հիվանդների և հատուկ
կարիք ունեցող մարդկանց
վիճակը Իսլամի և Իսլամական
քաղաքակրթության մեջ:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՉ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իսլամական օրենքի ներքո ոչ մահմեդական փոքրամասնությունները ստանում են այնպիսի իրավունքներ և արտոնություններ, որ մյուս փոքրամասնությունները չունեին որևէ այլ օրենքի և երկրի դեպքում: Մահմեդական համայնքի և ոչ մահմեդական փոքրամասնության փոխհարաբերությունները հիմնված են Ալլահի կանոնի վրա, որն ասում է. «Ալլահը չի արգելում ձեզ կապված նրանց հետ, ովքեր չեն մարտնչում ընդդեմ ձեր հավատքի, ոչ էլ քշում են ձեզ ձեր

տներից, վերաբերվել բարի և արդար, քանի որ Ալլահը սիրում է նրանց, ովքեր արդար են»։ (Ալ-Մուսթահանահ :9)

Հետևյալ տարբերակը հաստատել է էթնիկ և օրինական հիմքը, ըստ որի մահմեդականները պետք է վերաբերվեն ոչ մահմեդականներին, մասնավորապես բարությունը և արդարությունը այն բոլորի հետ, ովքեր թշնամություն չեն տածում նրանց դեմ։ Մինչ Իսլամը մարդկությունը անտեղյակ էր այս կանոններին։ Իսլամից հետո այն ապրեց դարեր, սակայն տուժեց դրանց բացակայության սարսափներից։ Այն մինչ այժմ

ակնկալում է այն օրը, երբ այն
կարող է կիրառվել
ժամանակակից
հասարակություններում, սակայն
ապարդյուն, շնորհիվ կրքի,
Ֆանատիկության և
ռասայականության:

**ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՀԱՎԱՏՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Իսլամական օրենքը հաստատել է
մի քանի իրավունքներ և
արտոնություններ ոչ-
Մահմեդական
փոքրամասնությունների համար:
Ամենակարևորներից մեկը,
միզուցե, հավատքի

ազատությունն է, որը Ալլահը
 հաստատել է ասելով. «Գոյություն
 չունի պարտադրանք կրոնի մեջ»:
 (Ալ-Բակարա: 256) Սա նույնպես
 արտացոլվել է Մարգարեյի
 (Խ.Ա.Ո.Ն) նամակի մեջ, որը
 ուղղված էր Յեմենում գտնվող
 Գրեթի մարդկանց, **որտեղ նա
 նրանց հրավիրում էր Իսլամի:Նա**
 (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «և հրեան և
 քրիստոնյան, ով ընդունում է
 Իսլամ, դառնում է
 հավատացյալներից մեկը,
 ունենալով իրենց իրավունքները և
 պարտավորությունները և նրան,
 ով մնում է հրեա կամ քրիստոնյա,
 չպետք է ստիպել թողնել իր կրոնը
 ...» [\[49\]](#) Ինչպես Իսլամական
 օրենքը թույլատրում է ոչ

մահմեդականներին վայելել
հավատքի ազատությունը, այնպես
էլ ընդունում է կանոններ,
որպեսզի պահպանի իրենց
կյանքերը, հիմնավորվելով, որ
նրանք մարդկային էակներ են,
ովքեր ունեն կյանքի և գոյության
իրավունք: Այս առումով,
Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ասաց.«ով
սպանում է պայմանավորված
մարդուն,(ոչ մահմեդականին, ում
պաշտպանում է պետությունը
կամ համաձայնագիրը), չի շնչի
Դրախտի հոտը»:[50]

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ, ԸՆԴԴԵՄ ՈՉ
ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ
ԱՐՎԱԾ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) զգուշացրեց ընդդեմ ոչ մահմեդականների դեմ կատարվող

անարդարությունների և նրանց իրավունքների նվազման: Նա խոսք տվեց լինել անարդարի ախոյանը: Նա ասաց.

«Չզուշացեք, եթե որևէ մեկը ճնշում է պայմանագիր կնքած մարդուն, կամ նվազեցնում նրա իրավունքը, կամ պարտադրում է նրան իր հնարավորություններից վեր աշխատել կամ առանց համաձայնության նրանից որևէ բան է վերցնում, ես կմիջնորդեմ նրա համար Դատաստանի Օրը»: [\[51\]](#)

Այս առումով, Մարգարեյի
(Խ.Ա.Ո.Ն) լավ օրինակներից է
այն, ինչ պատահեց Ալ- Անսարի
հետ Քայբարում, երբ Աբդուլլահ
իբն Սահլ Ալ- Անսարին, թող
Ալլահը գոհանա նրանով,
սպանվեց Հրեաների երկրում:
Շատ հավանական էր, որ
հրեաներից մեկն էր նրան
սպանել: Ամեն դեպքում,
գոյություն չունեի վկայություն:
Ուստի, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)
Հրեաներին պատժի չենթարկեց,
սակայն նա խնդրեց նրանց
երդվել: Սահլ իբն Աբու Հաթմանը,
թող Ալլահը գոհանա նրանով,
հաղորդեց, որ իր մի քանի
ցեղակիցներ գնացին Քայբար և
անհայտացան և այնուհետ

նրանցից մեկին սպանված գտան:
 Նրանք ասացին մարդկանց, ում
 մոտ գտնվեց դիակը, «Դուք
 սպանել եք մեր ուղեկցորդին»:
 Այդ մարդիկ ասացին. «Մենք ոչ
 սպանել ենք նրան, ոչ էլ տեղյակ
 ենք ոճրագործից»: Հարազատից
 զրկված խուճբը գնաց մարգարեյի
 մոտ և ասաց. «Օվ, Ալլահի
 Մարգարե, մենք գնացինք
 Քայբար և մեզանից մեկին
 սպանված գտանք»: Մարգարեն
 ասաց. «Թող ձեզանից ավագը
 առաջ գա և խոսի»: Այնուհետ
 Մարգարեն ասաց նրանց, «Բերեք
 ձեր ապացույցները ոճրագործի
 դեմ»: Նրանք ասացին. «Մենք ոչ
 մի ապացույց չունենք»:
 Մարգարեն ասաց. «Այդ դեպքում

ամբաստանյալները
կերդվեն»: Նրանք ասացին. «Մենք
չենք ընդունում հրեաների
երդումները»: Ալլահի
Մարգարեյին դուր չեկավ, որ
սպանվածի արյան գումարը
պետք է կորչի առանց
փոխհատուցման, ուստի,
հանգուցյալի բարեկամներին,
որպես Դիյա, (արյան գումար), նա
վճարեց հարյուր ուղտ Չաքյաթի
ուղտերից»: [52]

Այստեղ, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ար
եց այն, ինչ ոչ ոք նույնիսկ չէր
կարող պատկերացնել, նա ինքը
մահմեդականների ֆոնդից
վճարեց արյան գումարը,
որպեսզի հանգստացնի Ալ-Անսար

ցեղի անհանգստությունը, **առանց հրեաների դեմ անարդարության: Այսպիսով, Իսլամական պետությունը ստանձնեց բեռը, այնպես, որ կասկածելի կանոնը չդրվի կիրառության հրեայի կողմից:**

**ՈՉ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Իսլամական օրենքը երաշխավորում է ոչ մահմեդականների միջոցների պաշպանության իրավունքը: Այն արգելում է անարդար կերպով վերցնել կամ զավթել այս միջոցները. գողությանը, **յուրացմա**

մը և անարդարության
ցանկացած տեսակով վնաս
հասցնել: Մա գործնականորեն
կիրառում էր Մարգարեն
(Խ.Ա.Ո.Ն) Նաջրահ ժողովրդին
արված խոստումով, քանի որ նա
ասաց. «Նաջրահի ժողովուրդը և
նրանց շրջապատող տարածքները
կլինեն Ալլահի և Նրա Մարգարե
Մուհամմեդի պաշտպանության
ներքո; նրանց միջոցները, կրոնը,
առևտուրը և ամեն փոքրը կամ
մեծը նույնպես կլինեն
ապահով...» [\[53\]](#)

Ավելին, ոչ մահմեդական
փոքրամասնությունը ուներ
պետական գանձարանից Բեյթ Ալ-
Մեյ, Միջոցների Տուն, օգտվելու

իրավունք, որը երաշխավորում էր Իսլամական պետությունը- հաշմանդամության, ծերության կամ աղքատության դեպքերում, քանի որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Յուրաքանչյուրը ձեզանից պահապան է և պատասխանատու է իր խնամքի համար»,[\[54\]](#) հաշվի առնելով, որ նրանք քաղաքացիներ են այնպես. Ինչպես մահմեդականները և պետությունը պատասխանատու է նրանց բոլորի համար Ամենաբարձրյալ Ալլահի առջև:

Այս առումով, Աբու Ուբայդը[\[55\]](#) հաղորդեց իր Ալ- Ամուլալ, միջոցներ, գրքի մեջ Սաիդ իբն Ալ- Մուսայբու[\[56\]](#)

հեղինակությանը, որ նա
ասաց. «Ալլահի Մարգարեն
(Խ.Ա.Ո.Ն) տվել էր ողորմություն
Հրեա ընտանիքին, այսպիսով
ողորմություն կարելի է տալ
նրանց»: [57]

Այս առումով Իսլամի մեծությունը
և Իսլամական
քաղաքակրթության
մարդկայնությունը
արտահայտում է մի
պատմություն, որը նշվել է
Սուննայում, Մարգարեյի
պատումների գրքերի մեջ:
Պատմությունը ասում է, որ, երբ
Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) առջև
հուղարկավորության թափոք էր
անցնում, նա ոտքի կանգնեց: Երբ

նրան ասացին, որ այդ հրեայի
հուղարկավորություն է, նա
ասաց. «Արդյո՞ք նա ապրող էակ,
հոգի չէ»: [58]

Հետոյալ օրինակները
հանդիսանում էին ոչ
մահմեդականների իրավունքները
Իսլամի և Իսլամական
քաղաքակրթության մեջ: Կանոնը
հարգանք է տաժում
յուրաքանչյուր մարդ էակի
հանդեպ, քանի դեռ նա չի գործել
անարդարության կամ
թշնամություն:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԻՍԼԱՄԱԿԱՆ

ՔԱԴԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՉ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իսլամը ունի իրատեսական հեռանկար կենդանիների մասին, որը հիմնված է նրանց կարևորության վրա կյանքում և նրանց օգտակարության մարդկային էակների համար և համագործակցության մեզ հետ, կառուցելու տիեզերքը, **որպեսզի կյանքը շարունակվի**: Այս վկայում են Սուրբ Ղուրանի շատ սուրաներ, որոնք Ալլահը կոչել է կենդանիների անունով, ինչպիսիք են Կով, Եղջերավոր Անասուն, **Մեղու և այլն**:

Սուրբ Ղուրանը մեջբերում է կենդանիների մեծարման ապացույց, **նշելով իրենց կանգուն և տեղին դիրքերը մարդու կյանքում:** Ամենագոր Աստվածը ասաց. «Եվ կենդանուն Նա արարել է ձեր համար, մարդիկ. Նրանցից ձեզ բխում է ջերմություն և բազմաթիվ օգուտներ, **և նրանց մսից դուք սնվում եք:** Եվ դուք պետք է ունենաք հպարտության զգացում և գեղեցկություն նրանց մեջ, երբ դուք քշում եք նրանց տուն երեկոյան և ինչպես տանում նրանց դուրս արոտավայր, **առավոտյան:** Եվ նրանք կրում են ձեր ծանր բեռները հողեր, որ դուք չեք կարող այլ կերպ հասնել,

բացառությամբ հուսահատ
հոգիների, քանի որ ձեր Տերը
իրոք, Ամենաբարին,
Ամենագթասիրտն է»:(Ալ-Նահլ
:57)

ՈՐՈՇ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Իրավունքներից մեկը, որը
սահմանել է Իսլամը կենդանիների
համար, Իսլամական
օրենսդրության մեջ, նրանց
չվնասելն է: Չարհիրը, (թող Ալլահը
գոհանա նրանով) հաղորդեց, որ
մեկ անգամ, Մարգարեն
(Խ.Ա.Ո.Ն)անցավ մի կենդանու

կողքով, որի դեմքին դրոշմ կար, այսպիսով նա ասաց. «**Թող Ամենագոր Աստվածն անիծի այն մարդուն, ով դրոշմել է կենդանուն»**:[\[59\]](#) Աբդուլլահ Իբն Ումարը, (թող Ալլահը գոհանա նրանով), նույնպես հաղորդեց, որ «Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անիծեց նրան, **ով անդամահատություն է արել կենդանուն»**:[\[60\]](#) Այսինքն, անդամահատել է նրա վերջույթները կամ մարմնի այլ մասերը, մինչ դեռ այն կենդանի է, որը նշանակում է, որ կենդանիներին վնասելը, տանջելը կամ նրանց նկատմամբ բարի չլինելը, ըստ Իսլամական Շարիաթի, **համարվում է ոճիր**:

Նույնպես, Իսլամը օրինականացրել է կենդանիների իրավունքները և արգելել է, հարամ, **փակի տակ պահել կամ սովամահ անել**: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մի կին պատիժ է կրել կատվի պատճառով, որին նա փակի տակ էր պահել, **մինչ այն սատկել էր**: Նա մտավ Դժոխքի Կրակ այդ պատճառով, քանի որ նա ոչ սնել էլ նրան, ոչ էլ ջուր էր տվել, քանի որ նա փակի տակ էր պահել այն, ոչ էլ ազատ էր արձակել, որպեսզի այն սնվի երկրի վնասատուներից»: [\[61\]](#) Սահի Իբն Ալ-Հանգալիյան հադորդեց, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) անցավ մի ուղտի կողքով, որը սոված էր,

այսպիսով նա ասաց. «Վախեցեք
Ալլահից,երբ դուք զբաղվում եք
այս գազանների բեռով,
ղեկավարեք նրանց լավ, կամ
սնվեք նրանցով լավ»:[\[62\]](#)

Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն)նույնպես
պատվիրեց, որ այս
կենդանիներին օգտագործեն,
[ինչի համար նրանց արարել են:](#)
Նա սահմանեց կենդանիների
հիմնական օգտագործման
նպատակը,երբ նա ասաց. «Երբեք
մի օգտագործեք կենդանիների
մեջքը որպես ամբիոն: Ալլահը
արարել է նրանց տանել ձեզ
երկրներ,որ դուք ի վիճակի չեք
հասնել, բացառությամբ
հուսահատ հոգիների»:[\[63\]](#)

Իսլամական օրենսդրությունը
 նույնպես սահմանել է
 կենդանիների իրավունքների մի
 կես, ըստ որի նրանց չպետք է
 գործածել որպես թիրախ:
 Աբդուլլահ Իբն Ումարը, (թող
 Ալլահը գոհանա նրանով),
 անցնում էր մի տղամարդու
 հավաքույթի մոտով, ով կապել էր
 թռչունին և նետեր էր արձակում
 դրա վրա: Նա ասաց. «Ալլահը
 անեծք է դրել այն մարդու վրա, ով
 այդպես է վարվում: Մարգարեն
 (Խ.Ա.Ո.Ն) դատապարտեց այն
 մարդկանց, ովքեր որևէ կենդանի
 բան, վերցնում են որպես
 սպորտ»: [64] Կենդանիների
 իրավունքի մեկ այլ սահմանում է,
 լինել բարի և գթասիրտ նրանց

նկատմամբ: Այս ակնհայտ է Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերի մեջ. «Մինչ մի տղամարդ քայլում էր ճանապարհով, նա սաստիկ ծարավ զգաց: Նա մոտեցավ ջրհորին, ներքև իջավ, ընպեց ջրից և դուրս եկավ: Այնուհետ նա տեսավ մի շուն, որը փնչացնում էր և լիզում էր ցեխը, չափազանց անսահման ծարավից: Տղամարդը ասաց իրեն», Այս շունը տառապում է միևնույն ծարավի իրավիճակից, ինչպես ես: «Այսպիսով, նա կրկին իջավ ջրհորը և իր կոշիկը լցրեց ջրով և պահեց այն իր բերանով և տվեց շանը: Այլահը երախտապարտ եղավ նրան այդ արարքի համար և ներեց նրան»: Մարդիկ ասացին.

«Օվ, Ալլահի Մարգարե, Արդյո՞ք մեզ տրված է վարձատրություն, կենդանիներին ծառայելու համար:» Նա ասաց. «Այո, գոյություն ունի վարձատրություն յուրաքանչյուր կենդանի էակի համար»: [65]

Աբդուլլահ իբն Ումարը մեկ անգամ հաղորդեց. «Մենք Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հետ էինք, երբ նա դուրս եկավ ինչ որ բան անելու: Մենք մի թռչուն տեսանք երկու ձագուկներով, այսպիսով մենք վերցրեցինք փոքրիկ ձագուկներին: Թռչունը սկսեց սավառնել աղետալի իր երկու ձագերի կորստից: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) վերադարձավ և

ասաց. «Ո՛վ հասցրեց
հուսահատության այս թռչունին,
տանելով նրա փոքրիկ ձագերը:
Վերադարձրեք
ձագուկներին»: [66]

Իսլամական օրենսդրությունը
որպես կենդանիների
իրավունքների հոգացություն,
նույնպես պատվիրել է ընտրել
պարարտ արոտավայր նրանց
համար: Եթե այդ պարարտ հողը
հասանելի չէ, ապա
կենդանիներին պետք է տանել
մեկ այլ
վայր: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) այս
առումով ասաց. «Ամենակարող
Աստվածը բարի է և սիրում է
բարություն և բավարարվում է

բարությամբ: Նա նույնպես տալիս է բարության համար, այն, **ինչ չի տալիս որևէ այլ մեկին: Եթե դուք ծանրաբեռներ ասյ կենդանիներին բեռով, տարեք նրանց լավ արոտավայրեր: Եթե հողը պարարտ չէ, տարեք նրանց, մինչ նրանք առողջ են, մեկ այլ տարածք»:**[\[67\]](#)

Ամեն դեպքում, իսլամական օրենսդրության մեջ գոյություն ունի մեկ այլ աստիճան, որը ավելի բարձր և արժեքավոր է, քան գթասրտությունը, այն է թե ինչպես վերաբերվել կենդանիներին. **Իհսան կենդանիների հանդեպ և նրանց զգացմունքների հարգանք:**

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)

կիրառության մեջ դրեց սա, երբ
նա մեզ պատվիրեց չարչարանքի
չենթարկել կենդանիներին մսի
համար նրանց մորթի ժամանակ,
անկախ նրանից, թե այն

Ֆիզիկական տանջանք է, երբ
նրանց տանում են սպանդանոց
կամ դանակի անփայլությունը
կամ թուլատրությունը նրանց
տեսնել դանակը, **որը պետք է**

գործածեն: Այլապես այն կլինի,
կարծես կենդանուն պատճառում

են երկու մահ: Շադդադ Իբն
Աուսը ասաց. «Ես հիշում եմ

երկու պատում Մարգարեյից
(Խ.Ա.Ո.Ն), նա ասաց. «Իրոք,

Ամենագոր Ալլահը նախատեսել է
գերազանցություն ամեն բանում...

Եթե դուք սպանում եք, սպանեք լավ: Թող ձեզանից յուրաքանչյուրը, սրի սայրը և թող նա հանգստացնի կենդանուն, որին նա մորթում է»: [68]

Աբդուլլահ Իբն Աբբասը (թող Ալլահը գոհանա նրանով) նույնպես հաղորդեց, որ մի մարդ իր ոտքը դրել էր ոչխարի կողմը և սրում էր սայրը, դանակը, մինչդեռ ոչխարը դիտում էր նրան իր աչքերով: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նշեց. «Ինչու՞ դու չես սրում սայրը մինչ այդ: Արդյո՞ք դու ցանկանում ես խեղճ կենդանուն պատճառել երկու մահ:» [69]

Ակնհայտորեն սա ցույց է տալիս
կենդանու իրավունքները Իսլամի
մեջ: Հասարակության և
Իսլամական քաղաքակրթության
ներքո կենդանիները վայելում են
ապահովություն,
հարմարավետություն և
անվտանգություն:

ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՉ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամենագոր Ալլահը մարդու
համար շրջակա միջավայրը
արարել է մաքուր, անբիծ,
օգտակար և կոչ է արել նրան

պահպանել այն: Ալլահը նույնպես
կոչ է արել մտորել այն հրաշքի
մասին, որը Նա դրել է տիեզերքի
մեջ լավագույն տեսքով:

Ամենաբարձրյալ Աստվածն
ասաց. «Արդյո՞ք նրանք չեն
տեսնում երկինքը իրենց
վերևում.- Ինչպես ենք Մենք
արարել այն, զարդարել և ոչ մի
թերություն գոյություն չունի: Եվ
երկիրը-Մենք տարածել ենք այն և
սահմանել ենք լեռներ ամուր
կանգնած և արարել ենք այնտեղ
ամեն տեսակի գեղեցիկը,
ծաղկելու գույգերով»: (Քաֆ : 6,7)

ՄԱՐԴԸ և ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅԻՐԸ

Ըստ այդմ, մահմեդականների և շրջապատող միջավայրի փոխհարաբերությունների միջև գոյություն ունի սեր և կապվածություն, **ներառելով անկենդանը և կենդանի արարածները**: Մահմեդականը այնուհետ գիտակցում է, որ միջավայրի պահպանությունը շահեկան է նրա համար այս կյանքում, որովհետև նա կունենա գեղեցիկ կյանք և հետագա կյանքում, **քանի որ Ալլահը նրան զթաարտաբար կվարձատրի դրա համար**:

Մարգարեյի շրջակա միջավայրի հեռանկարը գալիս է նշելու տիեզերքի համապարփակ

Ղուրանական գաղափարը, որը հիմնված է մարդու և բնության տարրերի փոխհարաբերության և այն հավատքի վրա, որ եթե մարդը չարաշահի կամ դատարկի բնության որևէ տարր, **ամբողջ աշխարհը ուղղակի կվնասվի:**

Օրինակներ, թե ինչպես է Իսլամական օրենսդրությունը ձգտում շրջակա միջավայրին.

Իսլամական օրենսդրությունը այս երկրի վրա գտնվող բոլոր մարդկանց համար սահմանել է ընդհանուր կանոն, **ըստ որի չպետք է վնասել տիեզերքը:** Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ասաց. «Լա դարար, ուալա դիրար» կամ «Թող

չիհի վնաս կամ փոխհատուցված վնաս»:[\[70\]](#)

Այնուհետ, Իսլամական օրենսդրությանը հաջորդում են այլ բաներ, որոնք աղտոտում և վնասում են միջավայրը:

Մարգարեն(Խ.Ա.Ո.Ն)ասաց.

«Խոլսափեք երեք

գործողություններից, որոնք մարդկանց անեծքին են բերում.

Աղտոտել ջրի ակունքներում,

ճանապարհներին և

ստվերում:»[\[71\]](#)

Նույնպես, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)

կոչ արեց մաքրել

ճանապարհները: Աբու Սաիդ Ալ-

Բուդրին հաղորդեց, որ

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.
 «Չգուշացեք, խուսափեք նստել
 ճանապարհներին»: Նրանք,
 մարդիկ, ասացին. «Օվ, Ալլահի
 Մարգարե, Մենք չենք կարող
 չնստել ճանապարհներին, քանի
 որ դրանք վայրեր են, որտեղ մենք
 զրուցում ենք»; Մարգարեն ասաց.
 «Եթե դուք հրաժարվում եք,
 սակայն պետք է նստեք, ապա
 տվեք ճանապարհին իր
 իրավունքը»: Նրանք ասացին.
 «Ո՞րն է ճանապարհի իրավունքը,
 օվ Ալլահի Մարգարե»: Նա ասաց.
 «Իջեցրեք ձեր հայացքը,
 խուսափեք մյուսներից
 վնասելուց, վերադարձրեք բարևը
 և վայելեք ինչը լավ է և արգելեք
 ինչը չարիք է»: [\[72\]](#) Վերջին

խորհուրդը, որը նշել է այս պատուհանը, արձրևանոցն է ամենի համար, որը ներառում է վնասել մարդկանց, **ովքեր գործածում են ճանապարհները և փողոցները:**

Մրանից ավելին այն է, որ Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) խոստացավ վարձատրություն, **միջավայրը մաքուր պահելու համար:** Նա ասաց. «Իմ մարդկանց արարքները, բարի և վատ, ներկայացվում են ինձ և ես համարում եմ ճանապարհի վրա գտնվող որևէ խոչընդոտի հեռացնելը նրանց բարի արարքներից և բաց թողած խորիսը առանց ծածկելու

մզկիթում, իրենց վատ
արարքներից»:[\[73\]](#)

Բացի այդ, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)
խնդրում է մահմեդականներին
մաքրել իրենց տները: Նա ասաց.
«Ալլահը լավն է և սիրում է ամենը
ինչ լավն է: Նա մաքուր է և սիրում
է մաքրությունը, Դուք պետք է
մաքրեք ձեր տները և չգնաք
Հրեաների հետքերով»:[\[74\]](#)

Այս հոյակապ ուսմունքները կոչ
են անում արժանապատիվ
կյանքի համար գերծ մնալ
ցանկացած աղտոտումից,
[անձեռնամխելի պահպանել](#)
[մարդու հիգիենան և](#)
[հոգեբանական առողջությունը:](#)

Որպեսզի ավելի արտահայտիչ պնդի պահպանել միջավայրը և նրա գեղեցկությունը, երբ նրան հարցրեց իր ուղեկցորդներից մեկը, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց «Ինչպե՞ս է, որ մարդը սիրում է իր հագուստը լավ տեսք ունենա և իր կոշիկները լավ տեսք ունենան, արդյո՞ք այդ հպարտություն է»: Նա ասաց. «Այլահը գեղեցիկ է և սիրում է գեղեցկությունը: Հպարտությունը նշանակում է մերժել ճշմարտությունը և մարդկանց վերևից նայել:» [75] Անկասկած գեղեցկությունը նրա համար է, որպեսզի պահպանել միջավայրը այնքան մաքուր և գեղեցիկ, [ինչպես Այլահն է արարել:](#)

Նույնպես, օժանելիք գործածելու
և նվեր տալու իր
առաջարկության մեջ, **մենք
մաքուր միջավայրի վկայության
կոչ ենք տեսնում**: Այս առումով
Մարգարեն (**Խ.Ա.Ո.Ն**) ասաց.
«Նա, ում տալիս են ծաղիկ, չպետք
է մերժի այն, քանի որ այն հեշտ է
կրել և հանելի է բույրով»:[\[76\]](#)

Հաշվի առնելով Իսլամի փառքը,
միջավայրը մաքուր պահելու
կիրառելի օրենքները, Մարգարե
Մուհամմեդը (**Խ.Ա.Ո.Ն**) ասաց.
«Երբ մահմեդականները ծառ են
տնկում, նրանք վաստակում են
բարեգործության պարգևը, այն
պտուղների համար, որը նա
տալիս է և նույնպես, ինչ

գողանում են, ինչ վայրի կենդանիները ուտում են, ինչ թռչունները ուտում են և ինչ մարդիկ վերցնում են դրանից, բարեգործություն է նրանց համար»:[\[77\]](#) Մեկ այլ խոսքերում նա ասում է, «Նրանց համար բարեգործություն է մինչ Աշխարհի Վերջը»:

Իսլամի հեքիաթայնությունը դրսևորվում է այն փաստի միջոցով, որ տնկելու պարզևր,որը միջավայրային ընկերական է, պետք է շարունակվի այնքան ժամանակ, որքան այս բույսը օգուտ է տալիս, նույնիսկ այն դեպքում, երբ այն անցնում է մեկ ուրիշի պատկանելություն, կամ

անձը, ով տնկել է այն կնքում է մահկանացուն:

Նմանապես, Իսլամական տվյալ օրենսդրությունը նշում է անմշակ հողերի հերկելու

օգուտները: Մարգարեն

(Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ցանկացած մեկը, ով վերակենդանացնում է մահացած հողը, ունի իրավունք դրա վրա» նկատի ունեն պարզև և «եթե գազանները և թռչունները սնվում են դրանից, նա, ով հերկել է կունենա այդ, որպես սադակահ»: [78]

Եվ քանի որ ջուրը միջավայրի ամենակարևոր աղբյուրներից է, այն խնայողաբար գործածելը և

մաքուր պահելը Իսլամի երկու կարևոր խնդիրներից է; Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) խուրհուրդ է տալիս մահմեդականներին խնայող լինել, երբ օգտագործում են ջուրը, նույնիսկ, **եթե այդ ջուրը առատ է**: Աբդուլլահ Իբն Ումարը հաղորդեց, որ Մարգարեն անցնում էր Սաադ Իբն Աբի Ուաքքասի [\[79\]](#) կողքով, երբ նա լվացում էր կատարում և ասաց. «Ի՞նչ է այս ավելցուկը: Եվ վերջինս պատասխանեց, **արդյո՞ք լվացում կատարելը շռայլություն է**: Նա ասաց. Այո, նույնիսկ եթե դու այդ անում ես վազող գետի մոտ»: [\[80\]](#)

Նույնպես, Նա կոչ էր անում,
չադտոտել ջուրը, կամ միզել
լնացած ջրի մեջ:[\[81\]](#)

Սա է Իսլամի միջավայրի և
Իսլամական քաղաքակրթության
հեռանկարը: Սա տեսակետ է, որը
հավատում է, որ ըստ տիեզերքի
Աստծո կանոնների, որը Ալլահը
արարել է լավագույն կերպարով,
միջավայրի տարբեր
ասպեկտները արձագանքում են,
[ինտերգրվում և](#)
[համագործակցում են միմյանց](#)
[հետ: Այսպիսով, Յուրաքանչյուր](#)
[Մահմեդական պետք է պահպանի](#)
[իր գեղեցկությունը:](#)

ԷԹԻԿԱՅԻ և ԱՐԺԵՔՆԵՐԻ
ԿԱՐևՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Էթիկան և արժեքները հանդիսանում են Իսլամական քաղաքակրթության բարոյական և հեզևոր գործոններ: Նույնպես, հանդիսանում են ցանկացած քաղաքակրթության էությունը և հիմքը: Միևնույն ժամանակ, նրանք ապահովում են իրենց գոյատևման գաղտնիքը և ճկունությունը ամբողջ պատմության և սերունդների ընթացքում: Եթե մեկ օր այս գործոնը վերանա, մարդը կկորցնի իր բարոյական ջերմությունը, որը

հանդիսանում է կյանքի ոգի և գոյություն, գթասրտությունը կհեռանա իր սրտից, նրա խիղճը ի վիճակի չի լինի խաղալ իր դերը, նա այլևս չի գիտակցի իր և իր գոյության ճշմարտությունը և նա պարտավորված կլինի նյութական սահմանափակումներով, **որից նա չի կարող փախչել:**

ՀՆԱԳՈՒՅՆ

**ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
և ԷԹԻԿԱՆ**

